

7484



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«17» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 122 - 24

Նախաձեռնող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք.Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

«Կոտայք-4» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված
տարածական պլանավորման փաստաթուղթ
Կոտայքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 122 - 24

«17» հուլիսի 2024թ.

**«ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական
պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նազնավարական գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝ «Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝ Նախագծային փաստաթղթեր,
ՇՄԱՌԳ հաշվետվություն

Գտնվելու վայրը՝ Կոտայքի մարզ

Ներածական մաս. «ԿՈՏԱՅՔ-4» տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը ներառում է Եղվարդ քաղաքը, Արագյուղ, Բուժական, Զովունի, Զորավան, Պոռոջան, Սարալանջ, Քասախ, Նոր Երզնկա (Արագածոտնի մարզ) բնակավայրերը:

Նախագծային փաստաթուղթը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրությամբ փաստաթուղթ:

Նկարագրական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիրի իրականացմամբ:

Մշակվող միկրոռեգիոնալ մակարդակի փաստաթղթի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետահատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են:



- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներատեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելով ներդրումային գրավչությունը:

«ԿՈՏԱՅՔ-4» տարածաշրջանի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման չափերն ընդունված են համաձայն CH245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր»-ի:

Էլեկտրատեղակայանների ՍՊԳ-ի չափերն ընդունված են դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով, համաձայն ՍՆ և Կ II-12-77 «Պահպանություն աղմուկից» և ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից նորմերի և կանոնների, ԳՈՍՍ «Ուժային, յուղային տրանսֆորմատորներ, թույլատրելի աղմուկի նորմեր և աղմկային փորձարկումների մեթոդներ»-ի: ՍՊԳ--ների չափն ընդունված է 20 մ:

Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերն ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված, համաձայն ՍՆ և Կ 2.05.06-85 «Մայրուղային խողովակաշարեր»-ի:

Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերն ընդունված են համաձայն ՍՆ և Կ 2.04.02-84 «Ջրամատակարարում», «Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»-ի:

«Խմելու-տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներ»-ի N2-III-Ա2-2 սանիտարական նորմերն ու կանոնները հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի թիվ 803 հրամանով:

Գերեզմանների ՍՊԳ-ն ընդունված է 300 մ, ինչպես նաև հաշվի է առնված ՀՀ կառավարության նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանների ու դիակիզարանների շահագործման մասին» 2006 թվականի N1910-ն որոշման հավելված 4-ի 7-րդ կետը:

Աղբահավաք վայրերի համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ: Աղբահավաք վայրերի քանակը՝ 21:

Կենսաբանական մաքրման կայանի ՍՊԳ-ն ընդունված է 300մ: ՍՆ և Կ 2.04.03-85 Կոյուղի, արտաքին ցանցեր և կառուցվածքներ:

Օրգանական ծագման թափոնների վարակազերծման և թաղման վայրերի ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:

«ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնն ընդգրկում է 25625.84 հա տարածք, այդ թվում քաղաք Եղվարդ՝ 6834.64հա, Արագյուղ՝ 2714.82 հա, Բուժական՝ 4233.08 հա, Նոր Երզնկա՝ 1640.17 հա, Պողոջան՝ 2176.4 հա, Քասախ՝ 1212,21 հա, Սարալանջ 1612.97 հա, Զորավան՝ 3811.69 հա, Զովունի՝ 1389.86 հա:

Հեռանկարում «ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնն ընդգրկելու է 25625.84 հա տարածք, այդ թվում քաղաք Եղվարդ՝ 6834.64 հա, Արագյուղ՝ 2714.82 հա, Բուժական՝ 4233.08 հա, Նոր Երզնկա՝ 1640.17 հա, Պողոջան՝ 2176.4 հա, Քասախ 1212,21 հա, Սարալանջ 1612.97 հա, Զորավան՝ 3811.69 հա, Զովունի՝ 1389.86 հա:



Բնակչության թիվը «ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնի տարածքում կազմում է 40196 մարդ, այդ թվում Եղվարդ քաղաքում՝ 12106 մարդ: Հեռանկարում միկրոռեգիոնում բնակչության թիվը կկազմի 44216 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ գյուղմթերքի արտադրությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունն ու առևտուրը:

«ԿՈՏԱՅՔ-4» տարածաշրջանի բնակավայրերի շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի
- ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկն ու էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, ինչը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

«ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնի բնակավայրերը հիմնականում գազաֆիկացված են: Ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են գազի և փայտի ծախսից ելնելով:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է՝ Եղվարդում -3821.98 տ/տարի, համայնքներում – 16829.48 տ/տարի:

Հիմնականում համայնքներից մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 22.227 մլն. դրամ տարի: Մթնոլորտ արտանետումների հիմնական ներդրումը՝ 99.3%, ավտոտրանսպորտն է:

«ԿՈՏԱՅՔ-4»-ի վարչական սահմաններում առկա են մի շարք ստորգետնյա ջրեր, հորատանցքներ և աղբյուրներ, որոնք հիմնականում օգտագործվում են:

«ԿՈՏԱՅՔ-4» համայնքում խմելու ջրերի աղբյուրները երկուսն են՝ Ջորավանում – 1000 լ/վրկ և Սարալանջում 13 լ/վրկ: Սնող ջրատարների վիճակը 50% բավարար են: Սնող ջրատարները հիմնականում ինքնահոս են: Ջրամատակարարման գոտիներն առկա են: Կոյուղացման աստիճանը 30-80%: Կեղտաջրերը թափվում են հինականում Չարենցավանի կոլեկտոր, նաև մոտակա ձորակներ և Հրազդան գետ:

Արագյուղ և Սարալանջ բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը հնամաշ են, գրեթե անկառավարելի: Ցանցը կառուցվել է տարիների ընթացքում բնակիչների կողմից, անհրաժեշտ է կառուցել ջրամատակարարման ներքին ցանց, ջրաչափական սարքերը սահմանազատման կետ տեղափոխելով:

Նաիրի խոշորացված համայնքի Ջորավան բնակավայրի ջրամատակարարման ցանցն անհրաժեշտ է ամբողջությամբ փոխարինել՝ ջրաչափական սարքերը տեղափոխելով սահմանազատման կետ: Վերանորոգման կարիք ունի նաև Ջորավան ՕԿՋ-ն: Բնակավայրի մի մասը կոյուղացված է և կոյուղին թափվում է ձորակը, անհրաժեշտ է կառուցել նոր կոյուղագիծ և միացնել Չարենցավան-Երևան կոյուղատարին:

«ԿՈՏԱՅՔ-4» համայնքի ոռոգման ջրի քանակը կազմում է՝ 7401.825 մ³, ջրի կորուստը կազմում է 23-50%: Ոռոգվում է 1963.23 հա հողատարածք, գործող աղբյուրներից օգտագործվում է 12569.025 հազ.մ³ / օր:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում հիմնականում տեղական նշանակության ճանապարհներ են և մեքենաների անցողաբար ցածր



է: Տրանսպորտային հոսքերի աղմուկն առաջանում է մեքենաների աղմուկից տրանսպորտի արագությունից և շարժման ինտենսիվությունից:

«ԿՈՏԱՅՔ-4» տարածաշրջանի բնակավայրերում ձայնի էկվիվալենտ մակարդակը ճանապարհից 25մ հեռավորության վրա, հաշվի առնելով կառուցապատված մասը կկազմի 39-40 դԲԱ, նորման 45-55 դԲԱ:

«ԿՈՏԱՅՔ-4» տարածաշրջանը ներառում է 25625.84 հա հողեր, այդ թվում՝

- գյուղատնտեսական հողեր՝ 20360.98 հա, հեռանկարում՝ 17 915 հա,
- բնակավայրերի՝ 2859.05 հա, հեռանկարում՝ 4520.09 հա,
- արդյունաբերության՝ 424.49 հա, հեռանկարում 436.33 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի՝ 147.45 հա, հեռանկարում 183.64 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ՝ 278.99 հա, հեռանկարում՝ 272. 752 հա,
- հատուկ նշանակության՝ 146.32 հա, հեռանկարում՝ 146.32 հա,
- անտառային՝ 1268.61 հա, հեռանկարում՝ 1268.61 հա,
- ջրային՝ 139.95 հա, հեռանկարում 883.035 հա,
- պահուստային – 0 հա, հեռանկարում՝ 0 հա:

«ԿՈՏԱՅՔ-4»-ի հողածածկույթը հիմնականում ներկայացված է բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած հողերով: Եղվարդ, Արագյուղ, Բուժական, Չոլունի, Ջորավան, Պոռոշյան, Սարալանջ, Քասախ, Նոր Երզնկա:

Հողի հիմնական աղտոտումը կատարվում է ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային և արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտերից:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝ ավտոտրանսպորտի, արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները, արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, համայնքների կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին:

Բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 2858.55 հա մակերես:


Բոլոր բնակավայրերի տարածքում առկա են աղբի համար նախատեսված կոնտեյներներ, որտեղից շաբաթական եռօրյա ռեժիմով աղբը աղբատար մեքենաներով հեռացվում է Եղվարդ քաղաքի աղբավայր:

Միկրոռեգիոնի տարածքում գործող աղբավայրերը երկուսն են՝ Եղվարդ և Պոռոշյան բնակավայրերի տարածքում:

Քանի որ, համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայր:

«ԿՈՏԱՅՔ-4»-ի տարածաշրջանի բնակավայրերում տեղակայված է ընդհանուր թվով 19 գերեզմանոց՝ ընդհանուր 60.107 հա մակերեսով: Գերեզմանոցները գրեթե բոլորը գործող են: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին հիմնականում պահպանված չէ:

Հաշվի առնելով բնակչության աճը, ինչպես նաև ներկայումս գործող գերեզմանոցների ոչ բավարար լինելը, հատկապես Բուժական և Սարալանջ բնակավայրերում, սույն նախագծի շրջանակներում նախատեսվում են նոր տարածքների հատկացում՝ Բուժականում 2 0.98 հա մակերեսով և 1 գերեզմանոց Սարալանջում- 1.04 հա մակերեսով՝ պահպանելով պահանջվող սանիտարական գոտիները:



«ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնի բնակավայրերի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում համայնքապետարաններում,

- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը,

- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում,

Նախատեսված են այգիներ, սպորտային հրապարակներ՝ կանաչ գոտիով և այլն: Բացի դրանից նախագծված են նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

Ռեկուլտիվացման ենթակա են բոլոր այն նպատակային նշանակությունների խախտված հողերը և հողամասերը, որոնք բացասական ներգործության արդյունքում ամբողջովին կամ մասնակի կորցրել են իրենց առաջնային տնտեսական արժեքը:

Ռեկուլտիվացման աշխատանքներն իրականացվում են երկու փուլով՝ տեխնիկական և կենսաբանական:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակում հողատեսքերի նպատակային նշանակությունների փոփոխություններն ու բաշխվածությունը պայմանավորված են և հիմնավորված հիմնադրույթային փաստաթղթի՝ որպես բնակավայրի հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները կանխորոշող, ելակետային տվյալների համակողմանի վերլուծության արդյունքների վրա հիմնված, առաջիկա 15 տարվա հեռանկարում բնակավայրերի հեռանկարային կարիքները (<<ՇՆ 30-01-2023 քաղաքաշինական նորմերի և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակումը կարգավորող 2011 թ. N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան հաշվի առնելով) նախատեսող, կայուն զարգացման սկզբունքների հիման վրա (ռեսուրսների՝ հողային, ջրային, ռեկրեացիոն խնայողական օգտագործմամբ:

Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 200 լ/օր/մարդ, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության համար:

Բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:

Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՁ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:

Խմելու ջրի վարակագերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:

Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:

Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ: Կորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում: Մարզում բացակայում են մաքրման կայանները, որի պատճառով կեղտաջրերը լցվում են բաց ջրահոսքեր:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից գնդակահարելու նպատակով սույն նախագծի շրջանակում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր



բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս. փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007, ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Շեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Ըստ «Կոտայք» ՋՕ-ի տրամադրած տեղեկատվության՝ Եղվարդ քաղաքի N1 դաշտային հատվածում անհրաժեշտ է կառուցել կիսախողովակ, LR-60 չափի 300 գծմ երկարությամբ: Զովունիում ջրագծի թողունակության անբավարարության պատճառով անհրաժեշտ է կառուցել 5000 գծմ երկարությամբ d=500 մմ խողովակաշար: Պոռոջանում ներոնտեսային ցանցի փոխարինում՝ շուրջ 2000 գծմ d=100 մմ-ոց խողովակներով:

Շեռանկարում համայնքների մթնոլորտային օդի աղտոտման աղբյուրներ կհանդիսանան արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումները: Արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում պատկանում են սանիտարական վտանգավորության V-րդ դասին: Արտադրական արտանետումները հիմնականում առաջանում են բնական գազի այրումից: Ներկայումս համայնքներում ֆոնային աղտոտվածությունը զգալիորեն ցածր է սահմանային թյուրատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

Շեռանկարում նախատեսված է Եղվարդ քաղաքի ջեռուցման 20%-ն իրականացնել արևային և հողմային էներգիայի օգնությամբ, իսկ 80%-ը գազով:

«ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 2858.55 հա մակերես: Միկրոռեգիոնի տարածքում ներկայումս գործող Եղվարդ և Պոռոջան բնակավայրերի աղբավայրերը ենթակա են կոնսերվացման:

Մինչև Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի համար նախատեսվող աղբավերամշակման գործարանի կառուցումն առաջարկվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված:

«Կոտայք-4» միկրոռեգիոնի մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն:

- «Կոտայք-4»-ի բնակչության աճի՝ տարեկան մեկ անգամ,
- ներդրումային ծրագրերի՝ գործընթացի ամբողջ ընթացքում,
- տրանսֆորմացիայի ենթակա հողերի՝ նախատեսված ժամանակահատվածներում,
- աղբահանության համակարգի ռազմավարության(հող, ջուր, օդ)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- գործող գերեզմանոցների սանիտարական նորմերի բարելավման՝ կանաչապատ գոտու հիմնում ամբողջ եզրագծով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ենթակառուցվածքների զարգացման՝ գործընթացի ամբողջ ընթացքում,
- կենսաբազմազանության ուսումնասիրության՝ մինչև նախագծերի իրականացումը,
- անտառների և կանաչապատ տարածքների՝ գործընթացի ամբողջ ընթացքում:

Թափոնները առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում:

Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 9.5 տ/տարի:



Թափոնները բաժանվում են 2 խմբի՝

- օգտագործման ենթակա;
- ոչ օգտագործելի:

Օգտագործման ենթակա թափոնների շարքին են դասվում՝ օգտագործված յուղերը, թեփերը:

Օգտագործված յուղերը տեղում ենթարկվում են մեխանիկական մաքրման (ռեգեներացիա) զտմամբ և նստեցմամբ: Մաքրված յուղերին ավելացվում են մաքուրը և օգտագործվում:

Առաջացած թեփի թափոնները ենթակա են օգտագործման տնտեսության այլ արտադրանքների պատրաստման համար: Օգտագործման ենթակա թափոններ են առաջանում գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկություններում:

Օգտագործման ենթակա թափոնների ընդհանուր քանակը կազմում է 3.9 տ/տարի:

Ոչ օգտագործելի թափոնները գործող ձեռնարկությունների բնույթից կախված, թունավոր չեն:

Այս թափոնները շինարարական, ավտոտրանսպորտային ձեռնարկություններում առաջացած թափոններն են՝ շինարարական աղբ, ավտոմեքենաների մասեր, օգտագործված տարաներ:

Քանի որ, համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի նշված թափոնները թափվում են կենցաղային աղբավայր:

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակում հողատեսքերի նպատակային նշանակությունների փոփոխություններն ու բաշխվածությունը պայմանավորված են և հիմնավորված հիմնադրության փաստաթղթի՝ որպես բնակավայրի հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները կանխորոշող, ելակետային տվյալների համակողմանի վերլուծության արդյունքների վրա հիմնված, առաջիկա 15 տարվա հեռանկարում բնակավայրերի հեռանկարային կարիքները նախատեսող, կայուն զարգացման սկզբունքների հիման վրա (ռեսուրսների՝ հողային, ջրային, ռելիեֆային խնայողական օգտագործում՝ մշակված փաստաթղթի շրջանակում քաղաքաշինական արդյունավետ միջավայրի ձևավորման անհրաժեշտությամբ, ինչպես նաև 15-ամյա հեռանկարում բնակավայրերի՝ գլխավոր հատակագծով հաշվարկված հեռանկարային աճին համահունչ տարածքների համաչափ զարգացման պահանջներով:

Համայնքների զարգացման հիմնական ուղղությունները

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռելիեֆային գոտիների կազմակերպումը,
- շրջակա միջավայրի բարելավումն և պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ- կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնաձին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը,
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում և կազմակերպում,
- բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձանների վնաս պատճառումը,
- հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցում,



- բոլոր համայնքների գազաֆիկացում,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացում և ընդլայնում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- բոլոր գյուղական համայնքների կոյուղացում,
- գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծում և գործարկում:
- նախատեսել նոր տեխնոլոգիաներ ջեռուցման ժամանակ՝ արևային էներգիա և բիոգազ,
- նախատեսել աղբի տեսակավորում:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված «ԿՈՏԱՅՔ-4» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան